ԱՐՄԱՎԻՐԻ 1979—1980 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԴԵՎՈՐԳ ՏԻՐԱՑՅԱՆ, ԻՆԵՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1979—1980 թթ. Արմավիրի պեղումները շարունակվեցին միջնաբերդում և քաղաքում։ Միջնաբերդում աշխատանքները տարվեցին ուրարտական մերձտաճարային մեծ համալիրում և մուտքի մոտ գտնվող պարսպի հյուսիս-արևմտյան ելուստի արևելյան ծայրում (նկ. 1)։

Մերձտաճարային համալիրը պեղվեց միջանցքի երկու թևերից դեպի արևմուտք և հյուսիս (նկ. 2), ուր բացվեցին միմյանց հետ կապված մի շարք ուղղանկյուն սենյակներ (№№ 5—9)։ Դրանց առանձնահատկությունը համեմատաբար մեծ բարձրության վրա պահպանված աղյուսե պատերն են, որոնք հիշեցնում են Կարմիր բլուրի իրավիճակը։ Աշխատանքներ տարվեցին նախորդ տարիներում ուրվագծված արևմտյան դռնից դեպի հարավ, միջանցքի նոր թևի հարավային պատը գտնելու նպատակով։ Միջանցքի արևելյան և արևմտյան պատերը վատ էին պահպանված՝ դրանց մեջ փորված միջնադարյան կացարանների, հորերի ու թոնիրների պատճառով։ Միջանցքի այդ թևի երկարությունը հասավ 19 մ-ի։

Միջանցքի միջնադարյան շերտում բացվեց կիսակլոր տուֆե քար (որը, հավանաբար, եղել է որևէ շենքի բարավոր) և ուրարտական ժամանակաշրջանի բազալտե սրբատաշ վեմ։ Ավելի խոր շերտերից դուրս եկան ուրարտական որմնանկարների աննշան բեկորներ, շքամեխեր, բազալտե թասի բեկոր և այլն։

Նախորդ տարում պեղված հատվածի հատակը բացելիս գտնվեց ուրարտական սափոր, բրոնզե օձագլուխ ապարանջան, երևան եկավ միջանցքը արևելքից արևմուտք կտրող, բազալտե քարերից շարված մի առու։ Թվում էր միջանցքը կավարտվեր հարևան սենյակի (№ 4) հարավային պատի ուղղությամբ, բայց այն շարունակվում էր հարավային լանջն ի վար։

Միջանցքին արևմուտքից հարևան № 4 սենյակի, այսպես կոչված որմնանկարներով դահլիճի, հատակագիծը մեզ հայտնի էր նախորդ տարիների պեղումներից։ Պեղված մակերեսը հավասարեցնելուց հետո, իջանք դահլիճի հյուսիսային պատի առջև, ուր նկատվում էին միջնադարյան շինության հետքեր։ Այս շերտում գտնվեց պղնձե դրամ և երկաթե դանակ։ Նույն շերտին պատկանող հողաթմբերի տակից դուրս եկան ուրարտական կապույտ և սպիտակ որմնանկարների հրդեհված բեկորներ՝ բուսական զարդերի (արմավենու) հետքերով։ Միջնադարյան մնացորդների տակ բացվեց ուրարտական հուշարձաններին բնորոշ վառված աղյուսների ամուլ շերտ։ Դահլիճի չափերը (12,30×9 մ) թույլ են տալիս ենթադրելու, որ այն ունեցել է ծածկի համար լրացուցիչ հենակետ ծառայող որմնամույթ կամ մույթ՝ թեպետ առ այսօր նման որևէ հետք կամ մնացորդ չի երևացել։ Լավ էին բացվում դահլիճի հյուսիսային աղյուսաշեն պատը և դեպի հարևան № 5 սենյակը տանող դուռը։

Դահլիճից հյուսիս, միջանցքից արևմուտք գտնվում է № 5, այսպես կոչված փակերով սենյակը։ Դեռ նախորդ տարում բացվել էր նրա հյուսիսային պատի մի փոքր հատվածը, որը միջանցքի դռան հյուսիսային կողի շարունակությունն էր։ Պեղումների ժամանակ երևաց № 5 սենյակը որմնանկարներով դահլիճից բաժանող հարավային պատի վերևի մասը։ Հյուսիսային պատի տակ ուրվագծվող դռան բացվածքի առջև և հարավային պատի տակ, դեպի որմնանկարներով դահլիճը տանող դռնից ոչ հեռու, գտնվեցին բրոնզե խոշոր փակեր և ծղնիներ։ Սենյակի արևմտյան մասում, մակերեսին մոտ, բացվեցին հյուսիսից հարավ ձգվող միջնադարյան պատի քարե հիմքեր։ Դրանից արևմուտք միջնադարյան կացարանների մնացորդները մեծ ավերածություններ էին գործել։ Այստեղ, փաստորեն, միջնադարյան երեք շերտ բացվեց՝ երկու տարբեր մակարդակի վրա նստած թոնիրներ և մի պատի մնացորդ։ Միջնադարյան կառույցների քարերի կույտերի տակ երևում էին № 5 սենյակին արևմուտքից հարևան ուրարտական մեկ այլ սենյակի պատերի մնացորդներ։ № 5 սենյակի արևմտյան պատը պահպանվել էր շատ ցածր. նրա դռան բացվածքի մեջ տեղադրված էր մեջը ինչ-որ հենակով միջնադարյան թոնիր։

Միջնադարյան և անգամ անտիկ ժամանակաշրջանի հետքեր նշմարվեցին հիշյալ սենյակի մյուս մասերում ևս։ Հարավային պատի մեջ լավ երևում էր միջնադարյան իջվածքը (լայնությունը՝ 2,85 մ, խորությունը՝ 1,85 մ), որն ընդգրկում էր պատի և դռան վերևի մասը։ Սենյակի արևելյան կողմի վերևի շերտում բացվեց միջնադարյան թոնիր և գտնվեցին հելլենիստական խեցեղենի բեկորներ։ Արևելյան պատը բացելուց հետո հայտնի դարձան սենյակի չափերը (3,60×4,80 մ)։ Հետաքրքրական էր արևելյան և հյուսիսային դռների դասավորությունը, որոնք երկու կողմից հարում էին սենյակի հյուսիսային անկյանը։ № 5 սենյակը, որն իր չորս պատերի մեջ էլ ունեցել է դռներ (հյուսիսային դռան լայնությունը՝ 1,10 մ, արևելյանինը՝ 1,55 մ, հարավայինինը՝ 1,05 մ, արևմտյանինը՝ 0,85 մ), կատարել է հանգուցակետի կամ ավելի ճիշտ կարգավորիչի ու բաշխիչի դեր համալիրում՝ իրար կապելով նրա տարբեր մասերը։ Ավելի խորանալիս, բացվեց սենյակի պատերի կավե շերտով ծածկված քարե ներքնամասը։ Հատակին իրեր չկային, բայց երևացին ծծումբի հետքեր։

№ 5 սենյակից հյուսիս, միջանցքից արևմուտք, բացվեց ուղղանկյուն մի այլ սենյակ՝ № 6 (չափերը՝ 3,05×3,85 մ), որը հարավային պատի դռնով (լայնությունը՝ 1,50 մ) հաղորդակցվում էր № 5 սենյակի հետ։ Արևմտյան պատի մեջ լավ պահպանված շեմքով մի այլ դուռ (լայնությունը՝ 0,95 մ, շեմքի երկարությունը 1,75 մ) տանում էր հարևան՝ № 7 սենյակը, որի վերևի շերտերում երևացին միջնադարյան պատերի, թոնիրների ու օջախների հետքեր։ Սրա քարե հիմքերի վրա աղյուսից շարված պատերը բավական լավ էին պահպանվել, եթե չհաշվենք արևելյան և հյուսիսային պատերի միջնադարյան հորերի ավերիչ ներգործությունը։ № 6 սենյակում հայտնաբերվեց վառված աղյուսե շերտ, ծածկի մասեր, ածուխի, որմնանկարների աննշան բեկորներ։ Պատերի աղյուսե շարքերի ու քարե հիմքերի միջև, կարծես, նշմարվում էր կավե շերտ։ Քարե ներքնամասը ևս ծածկված էր կավե շերտով։ Սենյակի

Նկ. 1. Արմավիրի միջնաբերդի հատակագիծը։

արևմտյան պատը թվում է, թե ավելի ուշ է շարված. նրա աղյուսները չեն միահյուսվում հարավային ու հյուսիսային պատերի հետ։ Հատակը դժվարությամբ էր բացվում։ Բացառված չէր, որ գործ ունեինք մի քանի հատակների հետ։ Հատակի կառուցվածքը պարզելու համար, սենյակի հյուսիսային կեսում, իջանք մինչև հարթեցված մայր ժայռը. սենյակի խորությունը հասավ 4 մ-ի։ Ժայռի վրա դրված էր հատակի կավե հիմքը։ Հատակին գտնվեցին խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ, կարմիր (այդ թվում մուգ կարմիր), թանձր, որակյալ անգորով պատած, լավ փայլեցրած խեցեղեն, դժգույն խեցեղենի բեկորներ և, այսպես կոչված, անդրկովկասյան, տեղական տիպի խեցեղեն՝ մուգ մոխրագույն, փորագիր նախշերով ու եղունդաղարդ, որոնք հաստատում են Կարմիր բլուրի նյութերի հիման վրա Բ. Պիոտրովսկու դեռևս 50-ական թվականներին կատարած դասակարգման ճշտությունը[1]։

№ 6 սենյակը արևմուտքից հաղորդակցվում էր № 7 ուղղանկյուն սենյակի հետ (չափերը՝ 4,10×3,05 մ)։ Այստեղ միջնադարյան շինարարական շերտը բավական խորն էր։ Սենյակի հարավային պատի տակ, մեծ խորության վրա, բացվեց միջնադարյան հոր, որի շրջակայքից գտնվեց բրոնզե հյուսածո ապարանջան։ Սենյակի արևմտյան պատի վրա երևաց դռան բացվածք (լայնությունը՝ 1 մ), հատակին կային մեծ քանակությամբ ոսկորներ, խեցեղեն (լավորակ թասի բեկորներ, կարասի մնացորդներ) և օջախ։

Պեղումները շարունակվեցին նաև միջանցքից հյուսիս։ Այստեղ դեռ նախորդ տարիներում սկսել էինք փորել նեղ խրամատ, բացել միջանցքի հյուսիսային պատի արտաքին մակերեսն ու հասել մինչև նրա հյուսիսային դուռը։ Դրա վերևում, դրսի կողմից բացվեց վրան աղյուսե շարքով մի հիմք, որն, անկասկած, ուրարտական ժամանակաշրջանի վերակառուցման արդյունք է։ Նման շարվածքի հանդիպել էինք նույն պատի ներսի կողմում և այն սխալմամբ վերագրել միջնադարյան ժամանակաշրջանին[2]։ Խրամատում առաջընթացը դժվարանում էր միջնադարյան շինարարական շերտի, թոնիրների, հորերի առկայության, ինչպես նաև՝ միջանցքի հյուսիսային պատի արտաքին երեսի վատ պահպանված լինելու պատճառով։ Միջանցքի պատին զուգահեռ, խրամատի հյուսիսային երկայնքով, իրարից հավասար հեռավորության վրա բացվեցին հավասար լայնությամբ աղյուսե պատերի հատվածներ։ Ինչպես հետագայում պարզվեց, դրանք միջանցքին հյուսիսից հարող սենյակների պատերն էին։ Միջնադարյան նյութից բացի, խրամատում գտնվեց նաև հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղեն (մի մասը ինչ-որ հատակի մնացորդների վրա) և ուրարտական ժամանակաշրջանի վառված գերանի կտորներ, կարասների բեկորներ։

Միջանցքին հյուսիսից հարող սենյակներից առաջինը № 8-ն է (չափերը՝ 4,20×3,35 մ), որի աղյուսե պատերը համեմատաբար լավ էին պահպանված (խորությունը՝ մոտ 3,20 մ)։ Սենյակն ուներ երեք դուռ, որոնցից հարավայինը (լայնությունը՝ 1,50 մ) բացվում էր դեպի միջանցք, մյուսը (լայնությունը՝ 1,50 մ) դեպի հյուսիս, երրորդը՝ (լայնությունը՝ 1 մ) դեպի հարևան (№ 9)

---

[1] Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, Ереван, 1950, с. 35—36.

[2] Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան, Արմավիրի 1977—1978 թթ. պեղումները («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 247)։

սենյակ։ Վերջին դռան բացվածքն ընկած էր միջանցքի հյուսիսային պատի ու № 8 և 9 սենյակներն իրարից բաժանող ու դրան ուղիղ անկյան տակ մոտեցող պատի ծայրի միջև։ Պեղվեց այս դռան քարե շեմը։ Սենյակի արևելյան պատի մեջ, բավական մեծ բարձրության վրա, երևաց մի խորշ (լայնությունը՝ 0,80 մ, երկարությունը՝ 0,72 մ, խորությունը՝ 0,65 մ), իսկ հյուսիսային պատի մեջ՝ միջնադարյան հորերի հետքեր։ Սենյակից գտնված նյութի մեծ



Նկ. 2. Միջնաբերդի մերձտաճարային համալիրի հատակագիծը։

մասը հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղեն էր՝ սև փայլեցրած մեծ ըմպանակներ. ըմպանակի և պնակի բեկորներ գտնվեցին նաև խորշում։ Մոտ 1,80 մ խորությունից սկսվեց ուրարտական շերտը (վառված եղեգ, ածխա-

ցած գերանների բեկորներ). բացվեցին պատերի քարե հիմքերը ու տոփանված կավե հատակը, ուր թափված էին կարմիր փայլեցրած և սև թասի ու անդրկովկասյան տիպի խեցու բեկորներ։

Միջանցքից հյուսիս ընկած սենյակներից հաջորդում (№ 9) երևացին արևելյան և արևմտյան պատերը, չհաշված հարավային՝ միջանցքից բաժանող պատը, որը բացվել էր խրամատը խորացնելիս։ Սենյակի լայնությունը 3,40 մ էր, երկարությունը դեռ չի որոշված, քանի որ հյուսիսային պատը մնացել է միջնադարյան քարե պատերի մնացորդների տակ։ Այստեղի խեցեղենը խառն էր, բայց գերակշռում էր հելլենիստականը։ Սենյակում գտնվեց աղորիքի վերին քար։

Ինչպես նշվեց, աշխատանքները շարունակվեցին նաև միջնաբերդի մուտքի մոտ գտնվող պարսպի հյուսիս-արևմտյան ելուստի արևելյան չպեղված հատվածում։ Հերթական՝ № 7 սենյակի, հատակագիծը նախորդների նման արտաքին պարսպին հենված մի ուղղանկյուն էր (չափերը՝ 5,45×3,60 մ)։ Պատերից հիմնականում պահպանվել էր քարաշեն ներքնամասը։ Արևելյան ու արևմտյան պատերը, դրանց ներքևի շարքերը կազմված էին հարթ երեսները դեպի սենյակի ներս ուղղված՝ միջին չափերի քարերից։ Հատկապես ուշագրավ էր լավ մշակված, եզրերը հանած (ռուստովկա) քարերից շարված հարավային պատը։ Սենյակի վերևի շերտերում երևացին չեչաքարերից շարված միջնադարյան պատերի հետքեր։ Խորանալիս դուրս եկան ծածկի վառված մնացորդներ և ամբողջ սենյակով մեկ տարածված սպիտակ զանգված։ Գտնվեցին ուրարտական կարմիր փայլեցրած խեցեղենի բեկորներ, ինչպես նաև աղորիքներ։

Միջնաբերդի հյուսիսային պարսպի հյուսիս-արևմտյան ելուստի վերջին սենյակը № 8-ն էր։ Սրա արևմտյան ու արևելյան պատերի հեռավորությունը 3,30 մ էր. հյուսիսային պատը, մյուս սենյակների նմանությամբ, կազմում էր արտաքին պարսպի, տվյալ դեպքում ելուստի, ներքին երեսը։ Ինչ վերաբերում է հարավային պատին, ապա այն չհաջողվեց բացել. երևացին մեծ քանակությամբ քարեր, այդ թվում՝ մեկը լավ մշակված, եզրերը հանված։ Այս պատը կամ քանդված է, կամ էլ մյուս սենյակների հարավային պատերի համեմատությամբ ավելի ներս է ընկած։ Արևելյան պատի մեջ մասամբ օգտագործվել էր բնական ժայռը։ Այստեղ դռան բացվածք երևաց, որը տանում էր № 8 սենյակի ու ելուստի անկյունը կազմող պատի միջև ընկած փոքր, նեղ, անորոշ տարածքը։ Բացառված չէ, որ ելուստը սենյակների բաժանելիս հաշվումների մեջ սխալներ են թույլ տրվել (թեև այդ սխալները կարող էին առաջանալ և ավելի ուշ, օրինակ՝ № 5 և № 6 սենյակները կառուցելիս), որի հետևանքով կարող էին որոշ շեղումներ առաջանալ՝ կապված այդ սենյակների պատերի անտեղի հաստացումների հետ։ Այդ պատճառով ելուստի արևելյան ծայրում անհրաժեշտ տարածություն չէր մնացել նոր սենյակի համար։

Նախորդների նման, № 8 սենյակը ևս պեղվեց մինչև մայր ժայռը։ Սենյակում գտնվեցին ոսկորներ և փորագրված, դաջված նշաններով ուրարտական խեցեղեն (թասեր, երկկանթանի, փշիկով սափորներ)։

Միջնաբերդի մուտքի մոտ կազմված ելուստի և նրա մեջ տեղադրված ութ սենյակների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում որոշ ենթադրություններ անել միջնաբերդի այդ մասի կառուցապատման, նրա

զարգացման տարբեր փուլերի մասին։ Բացառված չէ, որ Սարդուր II-ի օրոք, երբ ամրոցն ընդարձակվել է արևմտյան ուղղությամբ՝ պարսպի երկրորդ շարքը կանգնեցնելու ու ամրոցի հյուսիս-արևմտյան մասում նոր մուտք ձևավորելու ճանապարհով ստեղծվել է հյուսիս-արևմտյան ելուստը։ Եթե դա այդպես է, ապա պետք է ենթադրել, որ Արգիշտի I-ի ամրոցի հյուսիսային պատը, նրա եզրերը հանված, լավ մշակված քարերից շարված հատվածը չորրորդ աշտարակից հետո անկյուն չէր կազմում, այլ շարունակվում էր ուղիղ գծով դեպի արևմուտք՝ միանալով արևմտյան հին պարսպին, նրա այժմյան երկրորդ որմահեցին, որը նախկինում կարող էր անկյունային աշտարակ լինել։ Նման ենթադրության հիմք կարող է ծառայել № 7 սենյակում բացված, եզրերը հանված, լավ մշակված քարերից շարված հարավային պատը, որը մի գծի վրա է հյուսիսային պարսպի նույն մշակմամբ քարերից շարված հատվածի ընդհանուր ուղղության հետ։ Այնտեղ, որտեղ սկսվում է վերոհիշյալ ելուստը, ճարտարապետ Կ. Ղաֆադարյանը տեղադրում է Արգիշտի I-ի ամրոցի մուտքը[3]։ Եթե համաձայնվենք նման հատակագծման հետ, ապա ինքնին հասկանալի է, որ Սարդուրի II-ի օրոք կատարված վերափոխությունները պետք է հանգեին նաև վերոհիշյալ ելուստի կազմավորմանը, առանց որի գոյության հնարավոր չէր ձևավորել նոր մուտքը։ Ելուստի կազմավորմամբ լուծվում էին նաև նոր մուտքի պաշտպանության հարցերը, քանի որ նրա անմիջական հարևանությամբ տեղադրված միաչափ ու միատեսակ սենյակներում, ամենայն հավանականությամբ, ապրում էին միջնաբերդի կայազորի մարտիկները։ Այս հարցերն իրենց վերջնական լուծումը կարող են ստանալ պեղումները ելուստից դեպի հարավ շարունակելու, 60-ական թվականներին բացված երկարավուն ուրարտական բաժանմունքներն ընդարձակելու և ելուստի սենյակների հարավային պատերի արտաքին երեսները բացելու ճանապարհով։

Արմավիրի արևմտյան ծայրամասում, հելլենիստական դարաշրջանի ագարակում, 1979 թ. պեղվեց նախորդ տարում բացված, հնձանից հարավ ընկած տարածությունը։ Մաքրվեց հնձանի ոչ լրիվ պահպանված հարավային պատի արտաքին երեսը, ինչպես նաև՝ հնձանից արևմուտք (2,6 մ հեռավորությամբ) նրան զուգահեռ ձգվող պատը ամբողջությամբ (պահպանված մասի բարձրությունը՝ 0,4 մ, լայնությունը՝ 0,8 մ, երկարությունը՝ 8 մ)։ Պատից արևելք բացվեց դրան զուգահեռ, հյուսիսից հարավ ձգվող, մոտավորապես մի գծի վրա դրված երեք խարիսխ (պատից 2,7 մ, 2,9 մ, 3,3 մ, իսկ իրարից և հնձանից 1,8 մ, 2,5 մ և 1,3 մ հեռավորության վրա)։ Խարիսխներից երկուսը տուֆից էին (0,30×0,26 մ և 0,20×0,35 մ), իսկ մեկը՝ բազալտից։ Դրանց վրա կանգնած սյուները, հավանաբար, պահել են վերը նկարագրված պատից դեպի իրենց ձգվող ծածկը։

Պեղումներով բացվեց հնձանի հետ անկյան տակ միացող և դեպի արևելք ձգվող մեկ այլ պատ (լայնությունը՝ 0,75 մ), որի կենտրոնական մասում կար 1,45 մ լայնությամբ դռան բացվածք։ Այս պատին զուգահեռ, 5, 25 մ հեռավորությամբ, հարավային կողմից բացվեց մի երրորդ պատ, որը ամ-

---

3 Կ. Ղաֆադարյան, Նախնական դիտողություններ Արմավիրի միջնաբերդի կառույցների վերաբերյալ («ՀՍՍՀ-ում 1975—1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ», Երևան, 1977, էջ 23)։

բողջությամբ չի պահպանվել։ Այս պատերի մեջ ներփակված տարածքում հայտնաբերվեցին երկու՝ իրարից 3,10 մ հեռավորության վրա տեղադրված խարիսխ (մեկը բազալտե, մյուսը տուֆե), որոնք, կարծես, ավելի կապվում են նախորդ տարիներին բացված, հնձանից արևելք ընկած, իրար զուգահեռ բազալտե խարիսխների հետ։ Կարելի է ենթադրել, որ այստեղ առկա է շինարարական երկու շերտ։ Ինչպես նկատում ենք, այս հատվածում իրավիճակը բավական խառն է, որին նպաստել են ոչ միայն շինարարական վերափոխումները, ժամանակի քայքայիչ ուժը, այլև ավելի ուշ շրջանում այստեղ կատարված թաղումները։ Տեղում բացվել են երկու դամբարան, հիմնահողային, ուղղանկյուն, առանց որևէ ուղեկցող իրերի և շատ վատ պահպանված թաղումներով։ Չնայած այս բարդություններին, կարելի է եզրակացնել, որ փայտյա սյուների վրա հիմնվող, ծածկի տակ առնված և կանոնավոր պատերով պարփակված հնձանի շրջապատը ստեղծվել է նրա արտադրական գործունեությունը կազմակերպելու համար։

1980 թ. աշխատանքները կենտրոնացվեցին համալիրից հյուսիս ընկած տարածությունում։ Այստեղ պեղումներ էին կատարվել դեռևս 1974 թ., բացվել էին հյուսիսից հարավ և նրան ուղղահայաց՝ արևելքից արևմուտք ձգվող երկու կարճ պատեր և դրանց կից անտիկ դարաշրջանի թաղումներ։ Պատերի և ագարակի հիմնական մասի փոխհարաբերությունը պարզելու նպատակով պեղվեցին երեք քառակուսիներ։ Տեղանքն այստեղ ցածրադիր է, ուստի մշակութային շերտը հայտնաբերվեց բավական մեծ (0,70 մ) խորության վրա և շարունակվեց մինչև, հողի մակերևույթից հաշված, 1,30 մ։ Շինարարական նոր հետքեր չհայտնաբերվեցին, սակայն մաքրվեցին նախկինում բացված պատերի հիմքերը, որից պարզվեց, որ դրանք կրում են վերաշարման հետքեր։ Ավելի վաղ շրջանի, կանոնավոր, բազալտե խոշոր քարերով պատի վրա բարձրանում էին տուֆե և ճեղքած քարերից բավական անփույթ շարված վերնամասեր։ Պատերի շրջակայքում հայտնաբերված նյութական մշակույթը հելլենիստական դարաշրջանի էր։ Ուրեմն, պատերի հիմնադրումը և դրանց վերակառուցումը պետք է կապել հելլենիստական դարաշրջանի երկու տարբեր փուլերի հետ, մի երևույթ, որը նկատվել է նաև նախորդ տարիների պեղումների ժամանակ։

Արմավիրի պեղումներից ստացված հնագիտական նյութը, շերտագրական և տիպաբանական առումներով, կարելի է ներկայացնել ըստ մշակութային ժամանակաշրջանների։

Ուրարտական նյութերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում խեցեղենը՝ որոշակի արտաքին տարբերիչ հատկանիշներով (կարմիր փայլեցրած, ընդ որում մուգ կարմիր գերազանց փայլեցումով, բաց կարմիր և դժգույն հասարակ խեցեղեն) ու ձևերով (միջին մեծության կարասներից մինչև փոքր չափերի թասերն ու սափորները)։ Կարասները լայնաբերան են, գորշ, սև և բաց կարմրավուն, կճուճները՝ հաստափոր, հաստացող շրթերով։

Կոնքերի ու տաշտերի լայնաբերան, խորը, հաստապատ, կարմրավուն, գորշավուն, բաց մոխրագույն անոթների բեկորներն ունեն հաստ, կլորավուն, դեպի ներս թեքվող կամ դեպի դուրս լայնացող շրթեր, իսկ դրսից՝ շրթի տակ թեթևակիորեն ներճկված գոտի։

Ուշագրավ խումբ են կազմում կարմիր փայլեցրած և անփայլ հասարակ քրեղանները։ Դրանցից մի քանիսն ունեն դեպի ներս թեքվող, թեթևակիորեն

բարակող շրթեր. դրսից՝ ուսերի վրայով, անցնում են զուգահեռ նեղ ակոսներ կամ երկու կողմից ակոսներով եզերված ուռուցիկ նեղ գոտի։ Հատակը հենվում է կլոր ոտքի վրա։ Քրեղաններից մեկը մուգ կարմիր է՝ կատարյալ փայլեցումով։ Երկրորդի շրթերը թեթևակիորեն դուրս են ծռված՝ դրսից ներճկված գոտիով։ Երրորդն ունի դեպի ներս թեքվող, դրսից հաստացող շուրթ, իրանի վրա՝ զուգահեռ նեղ ակոսներ։ Անփայլ, հասարակ քրեղանները գորշավուն են, դեպի ներս թեքվող շրթերով, որոնց հիմքի դրսի կողմից ներճկված խոր ակոս է անցնում։

Իրենց ուրույն տեղն ունեն կարմիր փայլեցրած կամ դժգույն թասերը, որոնց շրթերը դեպի ներս են թեքվում, և դրանց տակով դրսից անցնում է ներճկված գոտի։ Կոր իրանը վերջանում է ներճկված հատակով, որը շրջափակված է կլոր, ընդգծված ոտքով։ Սափորներից մեզ հասել են կանթեր, վզեր, շրթեր ու հատակներ, ինչպես նաև ամբողջացող նմուշներ։ Կանթերը (մեծ մասը կարմիր փայլեցրած են) պահպանվել են ամբողջովին կամ բեկորներ և դրսից ունեն բնորոշ ընդերկայնական ներճկում։ Գտնվել է նաև մի նեղ ու շատ փոքր կանթի բեկոր։ Առանձնահատուկ է թանձր, մուգ կարմիր ներկով պատած ու հիանալի փայլեցրած անկանթ սափորը։ Այն ունի լայն, բավական բարձր վիզ, որը վերջանում է լայնացող, ձագարաձև շուրթով։ Վզի հիմքի վրա կա ռելիեֆ գոտի, որն ընդգծում է անցումը դեպի գնդաձև իրանը։ Մի այլ, բավական մեծ սափոր ունի դժգույն, անփայլ արտաքին։ Այն օժտված է կլորավուն, զանգվածեղ կանթով և երեքնուկաձև շուրթով։ Հայտնաբերված վերջին սափորը, իր բոլոր հատկանիշներով, Հայկական լեռնաշխարհի երկաթեդարյան արտադրանք է թվում։ Այն մուգ մոխրավուն, գրեթե սև, հաստափոր անոթ է, կլորավուն փոքր կանթով, ցածր, նեղ վզով, լայնացող շրթերով և տափակ հատակով։ Իրանի վերին կեսը հարդարված է երեքական նեղ ակոսներից կազմված գոտիներով, որոնց միջև տեղադրված են փայլեցրած եռանկյունիների շարքեր։ Գտնվել են նաև սաջերի, խուփերի, պնակների, գարեջրի պատրաստման սիգարաձև անոթների, երկկանթանի անոթների ելունավոր կանթեր, հորիզոնական կանթով թասերի, ծորակավոր և ալաբաստրոնաձև անոթների, ճրագների բեկորներ։

Ուրարտական անոթներից շատերն ունեն դրոշմված (ուղղանկյան մեջ վերցրած նիզակով աշտարակ), փորագրված (նիզակաձև նշան, աշտարակ, նիզակ, եռանկյունի, շրջանակների խմբեր) և թաց կավի վրա ճնշումով արված (մահիկաձև) զարդանախշեր։

Արմավիրի ուրարտական խեցեղենը հնարավորություն է ընձեռում բարձրացնել շերտագրական հարցեր, և տարբերակել մ. թ. ա. VIII դ. նյութերը VII դ. նյութերից։ Անդրկովկասյան տիպի կավանոթների բեկորները թույլ են տալիս № 6 և № 8 սենյակներում եղած նյութերը, այդ թվում և մուգ կարմիր ներկի թանձր շերտով պատած, հիանալի փայլեցրած կավանոթների նմուշները թվագրել ամրոցի գոյության երկրորդ շրջանով՝ մ. թ. ա. VII դ. վերջով։

Արմավիրի ուրարտական շերտում գտնված մետաղե իրերը թեպետ մեծ թիվ չեն կազմում, բայց խիստ ուշագրավ են։ Այս առումով հետաքրքրական են № 5 սենյակից հայտնաբերված դռան բրոնզե փակերն ու ծղնիները։ Փակերը (երկարությունը՝ 41—42 սմ) կազմված են կտրվածքում կլոր (տրամա-

գիծը՝ 3 սմ) երկար ձողերից՝ երկու ծայրերին կլոր, տարբեր չափի օղակներով (տրամագիծը՝ 15 և 8 սմ)։ Ծղնիները (մոտավոր երկարությունը՝ 30 սմ) քիչ տափակեցրած ու մեջտեղից ծռված ձողեր են, որոնց սուր ծայրերը մխրճվում են դռան փայտե մասի մեջ։ Հավանաբար, փակը մի օղակով մշտապես ամրացվում էր մի ծղնուն, որից այն մնում էր կախված, եթե դուռը բաց էր, իսկ փակելիս մյուս օղակը հագցվում էր մյուս ծղնու վրա։ Նման փակեր՝ մեկը բրոնզից, վրան Ռուսա II-ի սեպագիր արձանագրությունը, մյուսը՝ երկաթից, գտնվել են Կարմիր բլուրում[4]։

Կարմիր բլուրում իրենց զուգահեռներն ունեն Արմավիրում գտնված բրոնզե երեք շքագամերն՝ այսպես կոչված զիգատտիները[5], որոնց երկարությունը 15—17 սմ է։ Դրանք կտրվածքում քառակուսի են, գլխիկի ու դրանից քիչ ներքև գոյացած հաստ մասում՝ կլոր։ Գամերը ծառայել են գորգերը, դեկորատիվ վահանները պատերից կախելու և այլ նպատակների համար։

Սենյակներից մեկում գտնված բրոնզե թիթեղի բեկորները հետաքրքիր են իրենց ուղիղ եզրերով և բրոնզե փոքր ծռված լարերի օգնությամբ կատարված կարկատաններով։ Հյուսիսային պարսպին հարող № 7 սենյակում գտնվեց սկյութական տիպի կոթառավոր երկթև նետասլաք՝ կոթառի մի կողմում բնորոշ փշիկով (նկ. 3 4)։ Նման նետասլաքները թվագրվում են մ. թ. ա. VII—VI դդ. և, հավանաբար, առնչվում են ամրոցի անկման հանգամանքների հետ։

Արմավիրում հայտնաբերված քարե իրերից հիշարժան են բազալտե զանգվածեղ թասի բեկորը, չեչաքարե երկարուկ, վերևից բոնակով փոքր կոկիչը ու օբսիդիանե նետասլաքը, որը կարող է նախաուրարտական ժամանակաշրջանի լինել։

1975 թ. սկսած Արմավիրում գտնվել են որմնանկարների բեկորներ[6]։ Նման բեկորներ հայտնաբերվեցին նաև այս պեղումների ժամանակ։ Մերձտաճարային համալիրի միջանցքից գտնվածների վրա պահպանվել են կապույտ և կարմիր շերտեր. որմնանկարներով դահլիճից հայտնաբերվածները տուժել են հրդեհից և խամրած տեսք ունեն։ Այս բեկորների վրա նշմարվում են գոտիների, արմավենիների և թևերի փետուրների պատկերների հետքեր։

Ուրարտական սենյակների վերին շերտերում կամ բուն սենյակներում հայտնաբերված հելլենիստական դարաշրջանի նյութերը ներկայացված են խեցեղենով ու մետաղե առարկաներով։ Խեցեղենը մեզ հասել է բազմաթիվ բեկորներով, որոնք մի կողմից հնարավորություն են տալիս վերականգնելու կավանոթների նախնական, ամբողջական ձևերը, իսկ մյուս կողմից վկայում են տնտեսության մեջ դրանց ամենօրյա կիրառության մասին (նկ. 3)։ Այս տեսակետից հետաքրքրական են կարասների և կճուճների բեկորները, թեև դրանք կրկնում են նախորդ տարիներին Արմավիրում գտնված ավանդական ձևերը (դեպի դուրս ցցված շրթերով, փոքր վզով, լայնացող իրանով միջին չափի կարասներ, ուռուցիկ իրանով, տափակ հատակով լայնաբերան կճուճներ)։ Տնտեսության մեջ ունեցած իրենց դերով սրանց հարում են կոնքերը և լայնաբերան, խոր անոթների բեկորները, որոնք ունեն դուրս ցցված հաստ

---

4 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., նկ. 3, 20։

5 Նույն տեղում, նկ. 36։

6 Г. А. Тирацян, Урартский Армавир («Культура Востока. Древность и раннее средневековье», Л., 1978, с. 109—111).

կլորավուն շրթեր, դրսից լայն ներճկված գոտի ու ընդգծված անցում դեպի բուն իրանը։ Այս անոթներն օխրայագույն են՝ շրթերը և ներսի մասերը պատած շագանակագույն թանձր շերտով։

Իրենց կիրառությամբ առանձին խումբ են կազմում պնակները, թասերն ու ըմպանակները։ Արմավիրում գտնված թասերի բեկորները խաչազարդ են, թեթևակիորեն դեպի ներս ու դուրս լայնացող, վերևից տափակ շրթերով։ Անոթները բաց շագանակագույն են՝ ներսից պատած կարմիր շերտով։ Ըմպա-



Նկ. 3. Հելլենիստական դարաշրջանի նյութեր և սկյութական տիպի նետասլաք՝ միջնաբերդից։

նակները նույնպես տարածված ձևի են՝ կարմրավուն, օխրայագույն, սև փայլեցրած և այլն։ Ուշագրավ է սև փայլեցրած մեծ չափերի ըմպանակը (տրամագիծը՝ 23 սմ, բարձրությունը՝ 9 սմ)։ Սրա ուրվագիծը հիշեցնում է վաղ հայկական ժամանակաշրջանի օրինակները, որը մի անգամ ևս վկայում է հելլենիստական դարաշրջանում սև փայլեցրած խեցեղենի հնուց եկող ավանդների կենսունակության մասին։

Ուրույն տեղ են գրավում բաց ֆոնի վրա կարմրավուն շերտերով, փոքր շուրթով, ուղղահայաց պատերով անոթի բեկորները, բաց գույնի անգորի շերտով ծածկված ամֆորատիպ անոթի հաստ կանթը, որի վրայով անցնում է երկու կողմից փոսվածքներով եզերված ընդերկայնական, ուռուցիկ գոտի։ Կոր կտրվածք ունեցող երկու երկարավուն բեկորներ, վերին մասը կարմիր ներկով պատած, կարող են կալիպտերներ լինել։ Գունազարդ խեցեղենը, որով այնքան հարուստ է Արմավիրը, ներկայացված է ընդամենը մի քանի՝ այն էլ գոտեզարդ, օրինակներով (բաց դեղնավուն ֆոնի վրա մուգ սրճագույն գոտի, օխրայագույն ֆոնի վրա կարմիր նեղ գոտի) և մի ըմպանակով, որի շուրթը դրսից ծածկված է անփույթ արված կարմրավուն քսվածքներով։

Մետաղե առարկաներից պետք է հիշել բրոնզե գամերն ու կոճակը, որոնք թեպետ գտնվել են հելլենիստական շերտում, բայց կարող են և ուրարտական ժամանակաշրջանի լինել։ Երկաթե բոլորատեգն իր զուգահեռներն ունի նախորդ տարիներում գտնված զենքերի մեջ։ Բրոնզե հյուսածո ապարանջանը հանդիպում է ինչպես վաղ հայկական, այնպես էլ հելլենիստական դարաշրջանում (նկ. 4)։

Նկ. 4. Հելլենիստական դարաշրջանի խեցեղեն՝ ագարակից։

Միջնադարյան շերտը ներկայացված է կճուճների, թաս-քրեղանների բեկորներով, կարմիր փայլեցրած սափորով և մի ամբողջական, միջին մեծության կարասով։ Վերջինիս իրանը հարդարված է ուռուցիկ գոտիներով։ Ուշագրավ են նաև ֆայանսե բեկորը, արաբատառ արձանագրության հետքերով ապակյա բաժակի բեկորը և մի պղնձե դրամ։

Արմավիր քաղաքի արևմտյան ծայրամասում գտնվող հելլենիստական դարաշրջանի ագարակի նյութը հիմնականում խեցեղեն է և քարե գործիքներ ու առարկաներ։ Խեցեղենը ներկայանում է հելլենիստական խեցեգործությանը բնորոշ խոհանոցային հասարակ ու կունազարդ տեսակներով՝ յուրաքանչյուր տեսակի ներսում հանդես բերելով ձևերի ու հարդարման բազմազանություն (նկ. 3)։ Այսպես, հայտնաբերված կարասների բեկորները միջին չափերի, ոչ բարձր վզերով, դեպի դուրս լայնացող և հարթ կտրած շրթերով են, որոնք երբեմն ներկված են կարմիր։ Կճուճների խոհանոցային տեսակի կողքին առատորեն հանդիպում են նեղ վզերն ու թմբիկավոր շրթերը կարմիր և մուգ շագանակագույն ներկած օրինակներ։ Կճուճներից մեկը գունազարդ է, ուսերին կրում է մուգ շագանակագույն և վարդագույն գոտիների մեջ տեղադրված, իրար մեջ ներգծված եռանկյունիներից ու ծաղկաշղթաներից կազմված զարդանախշեր։ Հայտնաբերվել են լայնաբերան, ծորակավոր կճուճներ կամ թեյնիկանման անոթներ, որոնց ձգված շրթերով ծորակները երբեմն լրիվ միացած են անոթի վզին և շրթին, իսկ երբեմն էլ թեթև հենվում են շրթի եզրին։ Կան կարմիր լայն գոտիով զարդարված օրինակներ ու փայլեցրած և անփայլ, մուգ շագանակագույն ֆոնի վրա, ուսերին մուգ շագանակագույն ցանցաձև զարդ կրող նմուշներ։

Մեծ բազմազանություն է նկատվում թասերի, քրեղանների և կոնքերի ձևավորման մեջ (կլոր՝ շրթերը անոթի ներքին տարածության վրա հակված, պրոֆիլավորված իրանով ու լայնաբերան բեկորներ, ուղիղ՝ շուրթը որոշ թեքությամբ իրանին միացած, հարթ կտրած՝ շուրթը անոթի իրանին լայն կամ նեղ ակոսով միացրած բեկորներ)։ Դրանք մեծ մասամբ հանդիպում են բաց շագանակագույն կամ վարդագույն արտաքինի վրա, անոթների վերին մասերը ներսից ու դրսից կարմիր, մուգ շագանակագույն ներկված օրինակներով։ Երբեմն ներկը փայլեցված է այնպես, որ ձեռքի ռիթմից առաջացած շերտերը, թրծումից հետո մուգ ու բաց երանգներ առաջացնելով, անոթներին տվել են առանձնահատուկ գեղեցիկ տեսք։

Տափաշշերի բեկորները պատկերացում են տալիս դրանց տարբեր չափերի, կլորավուն և նիստավոր տեսակների մասին, որոնք հարդարված են մեկ կամ երկգույն, ավանդական համակենտրոն գոտիներով կամ գոտիների մեջ առնված ցանցաձև զարդերով։

Խիստ բնորոշ է ըմպանակների բեկորների առատությունը։ Դրանք հանդես են բերում պսակի ու իրանի միացման և զարդանախշման մեծ տարափոխություններ։ Հանդիպում են ավելի փռված ու հավաք տեսակներ, բաց գույնի մակերեսի վրա ներսից լրիվ կարմիր ներկած կամ խաչաձև զարդերով օրինակներ։ Բազմագույն հարդարված նմուշներում զարդը զբաղեցնում է կա՛մ շուրթի եզրը, կամ կողն ամբողջությամբ։ Նախշերի մեջ գերակշռում են ծաղկաշղթան, կարմիր ու շագանակագույն իրար հաջորդող ուղիղ ու զիգզագաձև գոտիները, դրանց մեջ շարված պտերը, իսկ մի դեպքում՝ գոտիների մեջ առնված թռչուններ խորհրդանշող պատկեր։ Ըմպանակների սև փայլեցրած տեսակ է ներսից ճնշումով կատարված՝ ծաղկապսակով հարդարված նմուշը։ Ըմպանակների բոլոր տեսակները պատրաստված են բարձր որակի, նուրբ և զնգուն խեցուց։

Կիսագնդաձև թասերը, ըմպանակների նման, ունեն անզարդ և գունազարդ տեսակներ։ Առանձնապես գեղեցիկ է ամբողջացող թասը, որի բաց վարդագույն ֆոնի վրա, անոթի կենտրոնում, արված է մուգ կարմիր շրջան (արև) և դրանից դեպի շրթերը հեռացող կարմիր ու մուգ շագանակագույն նեղ գծիկներ (ճառագայթներ)։

Հայտնաբերվել են խեցեղենի մինչև օրս բնակավայրում չհանդիպող տեսակներ ևս։ Օրինակ՝ գտնվել է միջնարերդում առատորեն վկայված, ալաբաստրոնաձև անոթի թեև անզարդ, սակայն շատ բնորոշ՝ գլանաձև, հաստապատ իրանի բեկոր։ Հետաքրքիր են նաև ձկնամանների խիստ փռված, կենտրոնում փոսորակով բեկորները։ Դրանցից մեկը վարդագույն մակերեսի վրա, շրթի եզրով, կրում է կարմիր, լայն գոտի, իսկ մյուսի ողջ ներսի տարածությունը ծածկված է իրար հաջորդող, թանձր կարմիր շերտերով և մուգ շագանակագույն ցանցաձև զարդով։

Այսպիսով, Արմավիրի ագարակի խեցեղենն աչքի է ընկնում տեսականու և կիրառվող զարդամոտիվների ու օգտագործված գույների մեծ բազմազանությամբ։ Ագարակի տնտեսական կյանքն են լուսաբանում պեղումների ժամանակ առատորեն հանդիպող բազալտե աղորիքները, կշռաքարերը, գետաքարե ու տուֆե կոկիչները և այլն։ Հետաքրքիր է չեչաքարից պատրաստված արգուկաձև կոկիչը, որի ձևը հայտնի է ուրարտական ժամանակաշրջանից և երկկողմանի շաղափումով ծակած՝ կենտրոնական անցքով օնիքսե անվակը։

Արմավիրի պեղումները շարունակվում են։ Դրանք կարող են կարևոր նյութերով հարստացնել հայոց հին մայրաքաղաքի ու հին Հայաստանի պատմությունը։

РАСКОПКИ АРМАВИРА В 1979—1980 гг.

ГЕВОРК ТИРАЦЯН, ИНЕССА КАРАПЕТЯН

Резюме

Во время раскопок древнего Армавира были продолжены раскопки урартского прихрамового комплекса на западном склоне холма и завершены также раскопки северо-западного выступа северной стены у входа.

Изучение коридора прихрамового комплекса показало, что на сей день он имеет общую длину в 30 м. Здесь открыты остатки пересекающего каридор канала, сложенного из необработанных камней средней величины на глиняном растворе, а также найдены широко распространенные на Древнем Востоке бронзовые парадные гвозди-зигатты и бронзовый браслет с концами в виде стилизованных змеиных голов.

Непосредственно к западу от коридора были раскопаны три прямоугольные комнаты с хорошо сохранившимися сырцовыми стенами на каменной основе. Одна из комнат имела четыре двери, ведущие в со-

предельные помещения. Здесь были найдены бронзовые массивные дверные засовы, стержневидные, с кольцами с двух концов, а также крупные петли для деревянных дверей.

На этом участке цитадели были обнаружены остатки средневекового поселения (стены, очаги, тондиры), местами повредившие культурные слои предыдущих эпох.

Находки свидетельствуют об использовании урартских помещений в эллинистическую эпоху.

На городской территории, на ее западной окраине продолжались раскопки усадебного комплекса эллинистического времени. Археологический материал усадьбы представлен главным образом керамикой, отличающейся разнообразием типов и форм и богатством орнаментальных мотивов, выполненных росписью.